



Եվրոպական միություն

Պատվիրակություն Հայաստանում

Քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժին

25 մարտի 2015թ.

Բրյուսել

Եվրոպական հարեւանության 2014թ. զեկույցների հաստատում

Այսօր ընդունված տարեկան զեկույցների փաթեթով Եվրոպական հանձնաժողովն ու Եվրոպական միության արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչը հայտնեցին իրենց գնահատականը Արեւելյան Եվրոպայի եւ հարավային Միջերկրականի 16 հարեւան երկրների հետ Եվրոպական հարեւանության քաղաքականության (ԵՀՔ) իրականացման առաջընթացի վերաբերյալ եւ առաջարկություններ ներկայացրին հաջորդ տարվա համար: 2014 թվականին Ասոցացման համաձայնագրեր ստորագրվեցին Վրաստանի, Մոլդովայի հանրապետության եւ Ուկրաինայի հետ, ժողովրդավարական փոփոխություններ գրանցվեցին Թունիսում և ամրապնդվեցին կապերը Մարոկկոյի հետ:

Այսօր ընդունված տարեկան զեկույցների փաթեթով Եվրոպական հանձնաժողովն ու Եվրոպական միության արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչը հայտնեցին իրենց գնահատականը Արեւելյան Եվրոպայի եւ հարավային Միջերկրականի 16 հարեւան երկրների հետ Եվրոպական հարեւանության քաղաքականության (ԵՀՔ) իրականացման առաջընթացի վերաբերյալ եւ առաջարկություններ ներկայացրին հաջորդ տարվա համար: 2014 թվականին Ասոցացման համաձայնագրեր ստորագրվեցին Վրաստանի, Մոլդովայի հանրապետության եւ Ուկրաինայի հետ, ժողովրդավարական փոփոխություններ գրանցվեցին Թունիսում և ամրապնդվեցին կապերը Մարոկկոյի հետ: Այնուամենայնիվ, թե՛ հարավում, և թե՛ արևելքում պահպանվել են հակամարտություններն ու ճգնաժամերը եւ դրանց հետ կապված անվտանգության եւ հումանիտար խնդիրները հատկապես ահաբեկչական սպառնալիքների և հարձակումների տեսքով: Եվրամիությունը զգալի օժանդակություն է կետրոնացրել Լիբանանում և Հորդանանում՝ Միրիական ճգնաժամի հետեւանքով աճող մարտահրավերներին դիմակայելու ուղղությամբ:

Եվրոպական հարեւանության փաթեթի ընդունման կապակցությամբ՝ Եվրոպական հանձնաժողովի ու Եվրոպական միության արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆեդերիկա Մոգերինին իր ելույթում նշեց.

«2014 -ը լուրջ մարտահրավերների տարի էր: Զինված կոնֆլիկտներ Ուկրաինայում, ծայրահեղ դաժանության եւ մարդու իրավունքների խախտման դեպքեր Մերձավոր

Delegation in Armenia

21, Frik Street, Yerevan, Armenia

Proshyan Street (entrance for visitors)

Tel.: (37410) 54 64 94; 54 64 95

Delegation-Armenia@eeas.europa.eu

www.eeas.europa.eu/delegations/armenia

Արևելքում եւ Աֆրիկայի հյուսիսում, ինչպես նաեւ Իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը: Ճգնաժամի ուղղակի հետեւանքներից մեկը աճող անկանոն միգրացիան և մարդկանց թրաֆիքինգը դեպի Եվրոպա: Այս զարգացումները փորձության ենթարկեցին ԵՀՔ-ն: Նման օրհասական ժամանակաշրջանում, ԵՄ-ն վճռական դիրքորոշումն է ավելի խորացնել հարաբերությունները տարածաշրջանի բոլոր գործընկեր պետությունների հետ՝ քաղաքական, տնտեսական և անվտանգության ուղղություններով»:

Եվրոպական հաեւանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հարցերով ԵՄ հանձնակատար Յոհաննես Հասան ընգծեց ԵՄ-ն համար Եվրոպական հարեւանության կարևորությունն ու ԵՀՔ վերանայման ընթացող գործընթացի նշանակությունը:

«ԵՀՔ զեկույցներում այսօր հրապարակված քաղաքական գնահատականներն ու տնտեսական գնահատումները, 2014 թվականի քաղված դասերը կօգնեն Եվրոպական միությանը տարածաշրջանի նկատմամբ մոտեցումը գնահատելու առումով: Ներկայումս տեղի են ունենում լայնածավալ խորհրդակցություններ Եվրոպական հարևանության ապագա քաղաքականության շուրջ՝ հաշվի առնելով գործընկերների հետ ավելի արդյունավետ գործելակերպ զարգացնելու հնարավորությունները՝ ի նպաստ ԵՄ-ն և իր իսկ հարեւան երկրների բարեկեցության»:

ԵՀՔ երկրի առաջընթացի զեկույցներ

Հայաստան <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4689 en.htm>

Ադրբեջան <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4688 en.htm>

Եգիպտոս <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4687 en.htm>

Վրաստան <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4686 en.htm>

Իսրայել <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4685 en.htm>

Հորդանան <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4684 en.htm>

Լիբանան <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4683 en.htm>

Մոլդովա <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4682 en.htm>

Մարոկկո <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4678 fr.htm>

Պաղեստին <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4681 en.htm>

Թունիս <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4680 fr.htm>

Ուկրաինա <http://europa.eu/rapid/press-release MEMO-15-4679 en.htm>

Հավելյալ տեղեկությունների համար դիմել

Մայա Կոչիյանչիչ (+32 2 298 65 70)

Քեթրին Օեյ (+32 2 296 99 21)

Անկա Պադուարու (+32 2 296 64 30)

Նաբիլա Մասրալի (+32 2 296 92 18)

Էյմոն Պրենդերգաստ (+32 2 299 88 51)

Ուղիղ կապ 00 800 6 7 8 9 10 11 կամ էլ. փոստ

Delegation in Armenia

21, Frik Street, Yerevan, Armenia

Proshyan Street (entrance for visitors)

Tel.: (37410) 54 64 94; 54 64 95

Delegation-Armenia@eeas.europa.eu

www.eeas.europa.eu/delegations/armenia